ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք. Բյուրեղավան 15 հունիս 2021թ.

2021 թվականի հունիսի 15-ին ժամը 15:30–ին տեղի ունեցավ Բյուրեղավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ ԽՀՀ) արտահերթ նիստը: Նիստին մասնակցում էին ԽՀՀ–ի նախագահ Վահրամ Ապրեսյանը, նախագահի տեղակալ Վարուժան Մարտիրոսյանը, քարտուղար Աննա Սահրատյանը ԽՀՀ-ի անդամներ՝ Կարինե Զոբանյանը, Գրետա Մեջլումյանը, Նազելի Ջաքարյանը, Խանում Օխոյանը: Նախքան օրակարգին անցնելը նիստը նախագահող Վ. Ապրեսյանը հայտարարեց, որ ԽՀՀ-ի անդամներից ներկա են յոթը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել: Այնուհետև Վ. Ապրեսյանը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.Անչափահասներ Գայանե Գոռ Աստվածատրյանի, Աննա Գոռ Աստվածատրյանի և Անի Գոռ Աստվածատրյանի համար հիպոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու և այն երեխաների անվամբ գրանցելուց հետո գրավադրելու թույլտվություն ստանալու հարցը :

/Զեկուցող՝ ԽՀՀ –ի քարտուղար Աննա Սահրատյան /

Ա. Սահրատյանը ԽՀՀ-ին ներկայացրեց ամուսիններ՝ Գոռ Կամոյի Աստվածատրյանի և Սերինե Ռուբենի Գրիգորյանի դիմումը, որտեղ նշվում է, որ նրանք ցանկանում են հիպոթեքային վարկով գնել Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հանրապետության փողոց 8 շենք 52 բնակարանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30012018 – 07 - 0001 տրված՝ 30 հունվարի 2018 թվականին) , որի համատեղ սեփականատերեր պետք է լինեն Գոռ Կամոյի Աստվածատրյանը (ծնված՝ 04.08.1983թ. տրված՝ 23.09.2019թ), կինը՝ Սերինե Ռուբենի Գրիգորյանը (ծնված՝ 26.09.1988թ. տրված՝ 03.07.2020թ) , իր անչափահաս երեխաներ՝ Գայանե Գոռ Աստվածատրյանը (ծննդյան վկայական՝ ԱԱ N 295958, տրված՝ 01.10.2009թ. ծնված՝ 12.09.2009թ), Աննա Գոռ Աստվածատրյանը (ծննդյան վկայական՝ ԱԲ N 275042, տրված՝ 25.04.2014թ. ծնված՝ 25.04.2014թ) և Անի Գոռ Աստվածատրյանը (ծննդյան վկայական՝ ԲԱ 301671, տրված՝

06.10.2020թ. ծնված՝ 04.10.2020թ) և նրանց անվամբ գրանցելուց հետո գրավադրելու թույլտվություն ստանալ: Ա. Սահրատյանը նշեց, որ Բյուրեղավան համայնքի Սամվել Վարդանյան փողոց 6-րդ շենքի լիազորի և հարևանների կողմից ներկայացվել է լիազորագիր, որտեղ նշվում է, որ Գոռ Կամոյի Աստվածատրյանը և Սերինե Ռուբենի Գրիգորյանն իրենց երեք անչափահաս երեխաների հետ 2015 թվականից բնակվում են Բյուրեղավան քաղաք Ս. Վարդանյան փողոց 6-րդ շենք 30 բնակարանում: Նրանք շատ բարեհամբյուր և օրինակելի մարդիկ են, երեխաները հաճախում են «Բյուրեղավանի հիմնական դպրոց»ՊՈԱԿ: Գոռ Աստվածատրյանը մասնագիտությամբ բժիշկ է, կինը տնային տնտեսուհի է:Նրանք ուշադիր և հետևողական ծնողներ են:

ԽՀՀ-ի նախագահ Վ. Ապրեսյանն առաջարկեց հարցը դնել քվեարկության

ԿՈՂՄ– 7 **ԴԵՄ**- 0
Կողմ քվեարկած ձայների մեծամասնությամբ

ԽՀՀ –Ն ՈՐՈՇԵՑ .

Ելնելով վերը նշվածից, ղեկավարվելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2.2 կետով, հաշվի առնելով անչափահաս երեխաների շահերը և այն, որ դիմումը հիմնավորված է և ներկայացված է բոլոր փաստաթղթերը՝ թույլատրել Գոռ Կամոյի Աստվածատրյանին և Սերինե Ռուբենի Գրիգորյանին իրենց անչափահաս երեխաներ՝ Գայանե Գոռ Աստվածատրյանի (ծնված՝ 12.09.2009թ), Աննա Գոռ Աստվածատրյանի (ծնված՝ 25.04.2014թ) և Անի Գոռ Աստվածատրյանի (ծնված՝ 04.10.2020թ) անվամբ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հանրապետության փողոց 8 շենքի 52 հասցեի անշարժ գույքը սեփականության իրավունքով գրանցելուց հետո գրավադրել:

ԽՀՀ-ի նախագահ Վ.Ապրեսյան

քարտուղար Ա. Սահրատյան